ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10.09.2015թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի նիսերի ժամանակացույցի հաստատում: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/

2. ԵՊՀ ԻՄ 2016-17 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների ցանկի քննարկում: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/

3. 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակների հաստատում: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/

4. ԵՊՀ ԻՄ 2015-16 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների հաստատում: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/

5. Տեղեկատվություն 2014-15 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ԻՄ ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) մասին: /Զեկուցող Ա. Ց. Դավթյան/

6. Կառուցվածքային փոփոխություններ /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/

7. Ընթացիկ հարցեր:

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Վ. Գրիգորյանի «Տուրիզմի աշխարագրություն» մեթոդական ցուցումների ժողովածուն հրատարակման երաշխավորելու հարցը:
- ԵՊՀ Իմ-ի 2016թ նոր կրթական ծրագրերի լիցենզավորման փաստաթղթերը կազմող ժամանակավոր հանձնաժող կազմելու վերաբերյալ:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2015-2016 ուս. տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում» հարցի կապակցությամբ ԵՊՀ Իմ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նշվեց, որ գիտական խորհրդի հաստատմանն ներկայացված 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի գիտխորհրդի ժամանակացույցի նախագիծը, որը կազմվել

է հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը, ուսումնական ժամանակացույցները, խորհրդակցվել է ԵՊՀ Իմ-ի բոլոր ստորաբաժանումների ղեկավարների հետ:

Արտահայտվեցին –Ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանը, ստորաբաժանման ղեկավարները:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի ժամանակցույցը:

Որոշեցին

Որոշում 11/1

1. Հաստատել ԵՊՀ Իմ գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:

Լսեցին « ԵՊՀ ԻՄ 2016-17 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա ներկայացնելով տարածաշրջանում աշխատաշուկայի զարգացման տենդենցները, ԵՊՀ Իմ–ի արտաքին շահակիցների կարծիքները և մասնաճյուղի պոտենցիալը, հիմնավորեց ներկայացվող նախագիծը: Մասնավորապես նշվեց, որ տարածաշրջանում առկա է աշխատուժի պահանջարկ հետևյալ մասնագիտություններով՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախնական զինվորական պատրաստություն», «Սոցիալական աշխատանք», «Դիզայն», «Համակարգչային գրաֆիկա»: Առաջարկվեց նաև «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների կրթական ծրագրերում փոխել գոյություն ունեցող մոտեցումները, և այդ մասնագիտություններով շրջանավարտներին տալ

հնարավորություն ձեռք բերել հավասար չափով գիտելիքներ անգլերեն և ֆրանսերեն լեզուներից, որը կարտացոլվի նաև նրաց տրվող մասնագիտացման մեջ, որն էլ կօգնի շրջանավարտներին աշխատաշուկայում լինել ավելի ճկուն (այս մոտեցումը ՀՀ-ում փորձ է արվում իրականացնել առաջին անգամ): Առաջարկվեց նաև «Սերվիս» մասնագիտացումը վերանվանել «Զբոսաշրջություն» կապված հասարակության ընկալման հետ:

Արտահայտվեցին տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ա. Մարգարյանը ամբիոնի վարիչներ և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին նախագծին:

Որոշեցին

Որոշում 11/2

1. Հավանություն տալ ԵՊՀ ԻՄ 2016-17 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների ցանկի նախագիծը համաձայն հավելված 2-ի:
2. Ներկայացնել ԵՊՀ գիտխորհրդի հաստատմանը:

Լսեցին «2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակների հաստատում» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նշեց, որ ֆակուլտետների խորհուրդները մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերությունը, ուսանողական խորհուրդը քննարկել և գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ «Վազգեն Սարգսյանի»

անվանական կրթաթոշակի համար «Պատմություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Նվեր Վաչագանի Բայրամյանին, «Շառլ Ազնավուրի» անվանական կրթաթոշակի համար, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Վարսենիկ Ռաֆիկի Սարգսյանին, «Դավիթ Անհաղթի» անվանական կրթաթոշակի համար «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ջուլիետա Հրաչյայի Դովլաթբեկյանին, Տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը «Մոնթե Մելքոնյանի» անվանական կրթաթոշակի համար «Սերվիս» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Անի Գագիկի Դավթյանին, «Սահակ Զորափորեցու» անվանական կրթաթոշակի համար «Սերվիս» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Նինա Հրայրի Գանջալյանին, «Շավարշ Մարգարյանի» անվան կրթաթոշակի համար «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Լուիզա Ռաֆիկի Ալեքսանյանին, Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի որոշումը՝«Սպարտակ Սարգսյանի» անվան կրթաթոշակի համար «Կիրառական արվեստ» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Մարիամ Արայիկի Սարհատյանին:

Արտահայտվեցին – տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ. Զաքարյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ա. Մարգարյանը: Նրանք կարևորեցին ԵՊՀ ԻՄ – ում կրթաթոշակի հավակնորդների օբյեկտիվ ընտրությունը, որը կարող է նպաստել ուսանողների շրջանում առողջ մրցակցության խթանմանը:

Որոշեցին

Որոշում 11/3

Հաստատել հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ «Պատմություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Նվեր Վաչագանի Բայրամյանին 2015–16 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 11/4

Հաստատել հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Վարսենիկ Ռաֆիկի Սարգսյանին, 2015–16 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 11/5

Հաստատել հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ջուլիետա Հրաչյայի Դովլաթբեկյանին, 2015–16 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 11/6

Հաստատել տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ «Սերվիս» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Անի Գագիկի

Դավթյանին 2015–16 ուս.տարվա առաջին կիսամյակում նշանակել «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 11/7

Հաստատել տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ «Սերվիս» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Նինա Հրայրի Գանջալյանին 2015–16 ուս.տարվա առաջին կիսամյակում նշանակել «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 11/8

Հաստատել տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Լուիզա Ռաֆիկի Ալեքսանյանին 2015–16 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմուն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 11/9

Հաստատել կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի որոշումը «Կիրառական արվեստ» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Մարիամ Արայիկի Սարհատյանին 2015–16 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Սպարտակ Մարգսյան» անվանական կրթաթոշակ՝ բարձր առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Լսեցին « ԵՊՀ ԻՄ 2015-16 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների հաստատում» հարցի վերաբերյալ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա ներկայացրեց նախագիծը, հիմնավորեց և առաջարկեց հաստատել:

Արտահայտվեցին, ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանը իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը: Ելույթ ունեցողները հիմնավոր համարելով փաստարկները առաջարկեցին հաստատել ներկայացվող նախագիծը:

Որոշեցին

Որոշում 11/10

Հաստատել ԵՊՀ ԻՄ 2015-16 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների համաձայն հավելված 3-ի:

Լսեցին « Տեղեկատվություն 2014-15 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ԻՄ ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) մասին» հարցի վերաբերյալ ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը: Նա համառոտ ներկայացրեց տեղափոխման արդյունքները, կարևորեց նաև այն հանգամանքը, որ ուսանողների կողմից դժգոհություն չկա կապված գործընթացի օբյեկտիվության և թափանցիկության հետ:

Արտահայտվեցին- Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ. Զաքարյանը:

Ելույթ ունեցողները կարևորեցին տեղափոխման օբյեկտիվությունը և թափանցիկությունը:

Որոշեցին

Որոշում 11/11

Ընդունել ի գիտություն:

Լսեցին «Կառուցվածքային փոփոխություններ» հարցի վերաբերյալ ԵՊՀ Իմ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Կարևորելով ԵՊՀ Իմ-ում օտարերկրյա Մուհ-երի հետ շահավետ համագործակցության հնարավորություններ ստեղծելու, առաջավոր փորձի փոխանակման, համատեղ գիտաժողովներ և սիմպոզիումներ կազմակերպելու, ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարճաժամկետ փոխանակման գործընթացը, ինչպես նաև այդ աշխատանքները պլանավորելու և իրականացնելու անհրաժեշտությունը, տնօրեն Ս.Ա. Առաքելյանը առաջարկեց ԵՊՀ Իմ-ի կազմում ստեղծել «Միջազգային կապերի բաժին» կ.գ.թ, դոցենտ Ա. Զ. Ալավերդյանի ղեկավարությամբ: Նա նշեց, որ այս հարցի կապակցությամբ կատարվել է քննարկումներ ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի հետ և ստացել է նրա գրավոր համաձայնությունը: Կատարվել են քննարկումներ նաև ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ, գիտական քաղաքականության եւ միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի տեղակալ, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Մարկարովի հետ:

Արտահայտվեցին - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ. Զաքարյանը, գիտխորհրդի այլ անդամներ: Ելույթ ունեցողները կարևորեցին ԵՊՀ Իմ-ի կազմում «Միջազգային կապերի բաժին» կազմավորելու առաջարկը:

Որոշեցին

Որոշում 11/12

ԵՊՀ Իմ-ի կազմում ստեղծել «Միջազգային կապերի բաժին»:

Ընթացիկ հարցեր

Լսեցին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Վ. Գրիգորյանի «Տուրիզմի աշխարագրություն» մեթոդական ցուցումների ժողովածուն հրատարակման երաշխավորելու հարցը: /Զեկ. Մ. Աթոյան/

Մ. Աթոյանը նշեց, որ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն» ամբիոնի 30.05.2015թ. թիվ 10 նիստով որոշում է կայացվել դիմել ԵՊՀ Իմ գիտական խորհրդին տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Վ. Գրիգորյանի «Տուրիզմի աշխարագրություն» մեթոդական ցուցումների ժողովածուն հրատարակման երաշխավորելու վերաբերյալ: Ձեռնարկը գրախոսվել է ամբիոնի առաջատար դասախոսների կողմից:

Արտահայտվեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը:

Նշվեց, որ ժողովածուն կարևոր ուղենիշ կլինի տուրիզմի աշխարհագրություն առարկայի դասավանդման համար:

Որոշեցին

Որոշում 11/13

Երաշխավորել հրատարակման տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Վ. Գրիգորյանի «Տուրիզմի աշխարագրություն» մեթոդական ցուցումների ժողովածուն:

Լսեցին - ԵՊՀ Իմ-ի 2016թ նոր կրթական ծրագրերի լիցենզավորման փաստաթղթերը կազմող ժամանակավոր հանձնաժող կազմելու վերաբերյալ հարցը:

Որոշեցին

Որոշում 11/14

1. Ստեղծել ԵՊՀ Իմ-ի 2016թ նոր կրթական ծրագրերի լիցենզավորման փաստաթղթերը կազմող ժամանակավոր հանձնաժող:
2. Հաստատել ԵՊՀ Իմ-ի 2016թ նոր կրթական ծրագրերի լիցենզավորման փաստաթղթերը կազմող ժամանակավոր հանձնաժողի կազմը համաձայն հավելված 4-ի:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

10.09.2015թ.